

մէ իշխանները, ազատները ու տիրապետողները (Հայաստանի արարած ժողովուրդը) : Իսկ Երեսմեջի գործակալներէն մէկը, որ կը կոչուէր ալ-Ալա իպըն Ահմատ, դնաց վանք մը՝ Սիսականի մէջ՝ որ ծանօթ էր Բաթակներու վանք անունով, զոր Հայաստանի քրիստոնեաները միշտ կը մեծարէին ու անոր ընծաներ կը նուիրէին. անկէջ առաւ ինչ որ գտաւ ու նեղեց բնակողները :

Իշխաններու աչքին ծանր եկաւ այդ տարբեր. իրարու գրեցին, զիրար յորդորեցին որ ապստամբին ու ոտքի ելլեն : Գլորւոյն Սուլթանները որ բարբարոսներ են, եւ կը ճանչցուն Արթան (խրթնախօս) անունով, որ յարձակին Երեսմեջի վրայ, ու զանոնք լեցուցին անոր դէմ, որովհետեւ իրենց Բագարատ իշխանը գերի տարած էր : Անոնցմէ ամէն մարդ, նոյնիսկ տիրապետողները (Հայաստանի արարած ժողովուրդը) անոնց օգնութեան զրկեցին, ձիաւորներ ու հետեւակներ, որոնք յարձակեցան վրան՝ Տարօնի մէջ՝ մինչ իր ընկերները ցրուած էին գիւղերու մէջ : Ձինքը սպաննեցին, ու գրաւեցին ինչ որ կար իր բանակին մէջ :

Այն ատեն հաւատացեալներու ամիրան ալ-Մուգառաքը Ալալլահ՝ Հայաստանի կառավարիչ կարգեց Մեծն Բուղա, որ երբ Բաղէշ եկաւ, ձերբակալեց Մուսա իպըն Ջուրարան, որ Բագարատի վրէժը լուծելու համար փափաքած էր Երեսմեջի սպանութիւնը ու օգնած էր անոր իրագործման : Բուղա պատերազմեցաւ Սուլթաններուն դէմ. անոնցմէ շատեր սպաննեց ու շատեր ալ գերի բռնեց : Յետոյ պաշարեց Աշտուը՝ Վասպուրականի իշխանը, որ Աղբակի մէջ էր եւ Համգա իպըն Գազիկի որդին էր : Ստիպեց զինքը իջնել իր բերդէն ու զրկեց զինքը Սամառա :

Բուղա յետոյ քաղեց դէպի Ճուրղան (Վրաստան), յաղթեց Իսհակ իպըն Իսմա-

յիլի ու խաչեց զանիկա : Նուաճեց ձուրդանն ու հետն առաւ Առանցիները, Հայաստանի չորս կողմը եղողները, Սիսականցիները, խոռվասէր ու ապստամբ քրիստոնեաները եւ ուրիշներ, մինչեւ որ բարեկարգուեցաւ երկիրը այնպիսի ձեւով՝ որուն նմանը երբեք չէր եղած : Յետոյ մեկնեցաւ դէպի Սամառա 241ին (855) (էջ 209-212) :

Իէ. — Վարդան՝ Ամր իպըն ալ-Ասի ազատագիրը. —

Ինծի պատմեց Ապու Այուպ Բաքրացին՝ լսելով Ապտըլ-Ղաֆֆար Խառանցիէն, իպըն Լուհայայէ, Եղիտ իպըն Ապի Հապիպէ, ալ-Ճալչանիէ՝ թէ լսեցի բազմուածնէ մը, որ ներկայ եղաւ Եգիպտոսի նուաճումին, թէ Ամր իպըն ալ-Աս, երբ նուաճեց Փոսթաթը, զրկեց Ապտալլա իպըն Հուտհաֆա աւ-Սահմի դէպի Այն-Շամս : Տիրեց երկրին ու հաշտութիւն կնքեց անոր գիւղերու բնակիչներուն հետ՝ Փոսթաթի նուաճումին հիման վրայ, ու զըրկեց Սարըճա իպըն Հուտհաֆա ալ-Ատուուի դէպի Փայում ալ-Աշմունայն, Իսմիմ, ալ-Պաշրուգաղ ու Սայիտի գիւղերը, եւ հրամանը կատարեց : Ղրկեց նաեւ Ուհայ ալ-Ճուհազի դէպի Դաննիս, Տիմիաթ, Դունա, Տամիրա, Շաթա ու Տիգրահա եւ չինեց Պուսիր, զրկեց Օգպա իպըն Ամր ալ-Ճուհանի : Կը պատմուի թէ զրկեց իր ազատագիրը Վարդան՝ Եգիպտոսի (Գահիրէի) չուկայի իշխանը, երկրին մնացած գիւղերուն վրայ ու տիրեց անոնց :

Ամր իպըն ալ-Ասի Եգիպտոսի նուաճումը շատ լաւ կերպով առաջ տանելով՝ երկիրը դարձուց հողատուրքի ենթակայ (էջ 216-217) :

Թրգմ. արաբերէմէ

Հ. ԱՅՐԱՀԱՄ ԱԴԱՄԵԱՆ

(Շարունակելի)

ՈՒՂԵՒՈՐԻ ՔԵԱՐ

ՈՂՋՈՅՆ ՎԵՆԵՏԻԿ

Ողջո՛յն ժպտուն Վենետիկ,
Ողջոյն երազ բեհեղեայ,
Լոյսերուդ մէջ պարուրուած՝
Գիշերաթալիտ ո՛վ աննրման դիցուհի :
Թողած արեւը հիւրընկալ,
Կ'երթամ գրկել ակն ոսկեւոյ փառքերուն,
Ձոր Բիւզանդիոնն իր հրմայքէն պարտը-
Աւանդեց օր մը քեզի, [ւած
Երբ ծովերու մայր՝ Կ'իշխէիր յաղթա-
[պանծ,
Հանդերն արեւն մինչեւ ծովերն ասիական :
Ողջո՛յն չըքնաղ Վենետիկ,
Մայր գեղեցիկ արուեստի,
Կախարդանքիդ գերի՝ աչքեր գեղասէր՝
Դարերով քեզ սիրեցին,
Քեզ զանձարան արեւելքի ճոխութեան,
Եւ նրբագործ պատարուններու թանգարան,
Ուր միտք, ճաշակ եւ գոյներու մոգու-
[թիւնն
Հողեպարար քաղցրութեան պէս երկնա-
[յին,
Ջրվէժ մ'ինչպէս ողողեցին պալատներդ,
Ու դուն դարձար սիրտ եւ կեդրոն շար-
[ժումին :

Ողջո՛յն Վենետ տոթական,
Եւ փառքերու դարաւոր.
Փառքեր ծովու, փառքեր գէնքի աննրմուն,
Պայծառ երկիրքդ կը պնեն աստղերով
Անմահներու, որոնց արիւնն անապակ
Հայրենի դաշն ամրագողեց ու կանգնեց :
Եւ թշնամին բարբարոս
Տորմիղներուդ ասեղ սարքէն դարհուրած՝
Ճանչցաւ ըզբեղ թաղուհի
Լայնածաւալ ծովերու :

Ողջո՛յն անդարձ մեծութիւն
Եւ աչքերու ծով հեշտանք :

Թերատուներին մէջ լոյսերուդ ճարման-
[դին՝
Դէմքդ ցանկալի յուշիկ յուշիկ կը խուսէ,
Ու դուն կարծես դարձած անուրջ անէակ՝
Կ'ըլլաս ընտուեր մը կենդանի՝
Անեղր, անափ խաւարին վրայ ծովերու,
Հողույս դէմ կէտ լուսաւոր,
Անառաւօտ, անիրիկուն չողարձակ :

~ ~ ~

ՇՈՒՆԵՐՈՒ ԵՐԳ

Արշալոյս է. ջուրերուն վրայ կը բացուի
Կապուտաղեղ նազանքով
Աչքը մեղոյշ առոււան :
Ու դով համբոյրն աստուածաշունչ դե-
իր թեւերով հրապնցիկ [փիւռին
Կը փայլայէ ճակատներ :
Կը դիտեմ սա դաշտը շարժուն, անսպառ...
Լեզակ լեզակ ալիքներու կարաւան,
Փրփուր կապած շրթունքին
Կու դան բախել տարփօրէն
Նաւուն լայնի կողերուն
Ու փըշրուած փըրփրերախ
Կ'երթան հեռու ու ծաւալուն ոլորտով՝
Ճեռուտ արիւն պատմելու
Անցքը թուոյ կարապին :

Արեւուն տակ կենսութեալ
Շովն ու երկինք իրարու մէջ կը նային,
Ու ես գրկած անհունութիւնն անըստուեր
Կը թեւածեմ ու կ'երգեմ
Սիրոյ նըւաղն անսահման,
Որ կը հոսի դաշնաթաւալ ծրփանքով
Անհորիզոն երկինքէն :

Աստղերէն վար կը կաթի
Գիշերային անդորրանք.
Մինչ հեւասպառ կը սուրայ
Կարապը կոյր, անեղրութեան ծարաւով,
Իր ալեհերձ վազքը խրոխտ
Շունչ մը կ'ըլլայ, խաւարին կուրծքը թա-
[սուն,



Որ կարծես թէ թաւալելով կ'իջնէ վար
Յաւիտենի անծայրածիր խորութեան
Անդունդներէն դահալէժ :

Գարնան հովովն անուշիկ,
Ծիծաղ ու երգ շրթունքներն՝
Կը դեղուն նաւն ալեծով :

Տարափին տակ լարերուն
Որ սրտէ սիրտ կը ծաւալի մեղրակաթ,
Աչքեր սիրով կը դուզուին
Որոնց մէջէն կը վառի
Խարոյկն էրոս աստուածին...:
Կը ծրփայ նաւն աղմուկով
Կայթառօնին հեշտանքին մէջ մրրկա-
Լոյս կուսաններ վարսաղեղ

Օրօրանէն դիւերուն
Նաւն իմ երրորդ արթննայ,
Ու այգին մէջ հեղաշունչ
Ծաղկի հրապոյրն անհունին՝
Պիտի խայտայ աչքս նորէն
Կապոյտներու ցոլացումով անդորրիչ :
1954 Ն. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒ

Հիմա որ դուն ա'լ չես հնչեր հայ տղաներու
Շրթունքին վրայ, հիմա որ դուն
Մօտ ես ահա՛ ճրրաղի պէս շիջանելու,
Կը մրմնջես հին աղօթքի նրման տրոտում :

Բաւերդ հողիս կ'արբեցընեն՝ սափորի մէջ
Մոռցըլած հին գինիի պէս,
Քու խորհուրդիդ ոսկեճաճանչ բուրբառն անչէջ
Սիրոյս կրակով դեռ կը մրխայ կարօտակէլ :

Ես կը դողամ վրադ, ինչպէս հողհատոր
Մէկու մը՝ որ ինձմէ ծընած,
Իմ արիւնիս մէկ արձաղանդն է հեռաւոր
Աստուածազեղ ժամանակի մը լուսարբած :

Բայց դուն կարծես իր ակունքին դարձած աղբիւր,
Ոչ մէկ չիթ ես կորսնցուցած,
Եւ շրթունքիս կ'ըլլաս երգում, կ'ըլլաս համբոյր,
Սուրբին խնկոտ գերեզմանէն վարդ մը ծաղկած...:

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

ԶԼՆՔԻ ՏՍԿ

ԽՐԱՄԱՏՆԵՐՈՒ ՄԷՋ

Ուր Օստում գետը կը լայնայ, նետուն-
լով լեռներուն կողերն ի վեր՝ մենք հաս-
տատած ենք մեր դիրքերը : Պէրաթը մեղ-
մէ եօթը քիլոմէրը հեռու է, Թիրանայի
ուղղութեամբ : Կէսօրուան դէմ, յաղթա-
մարմին գոմէշներ կու գան տապալակիլ
տղամիտուն աւազին մէջ, իրենց յոյնած
նայուածքները պտրտցնելով ջորիներուն
եւ ձիերուն վրայ, որոնք անյաղօրէն կը
խմեն գետին գեղին ջուրը :

Թշնամի սաւառնակները կը հասնին ե-
րեք տարբեր ուղղութեամբ, աջէն եւ ձա-
խէն, քերելով լեռներուն բարձունքները.
մէջտեղէն, հանդարտօրէն սահելով հա-
կոնեայ լեռնաշղթաներուն միջեւ տա-
րածուած պարապութեան վերեւ, ուր
դիրք բռնած են մահուան ուխտեալներն
ու լեռնային թնդանօթածիւղներու իմ
խումբս : Քիչ անդին վրանաբնակ հիւան-
դանոցն է, անկէ հաղիւ երկու քիլոմէր
հեռաւորութեամբ հակօդային թնդանօթ-
ները կը գտնուին, շուրջըրտուած աւազի
պարկերով : Պէրաթը անջատուած է մեղ-
մէ, որուն ձորամէջ կամուրջին դէմ, պա-
տերազմի ամբողջ տեւողութեան, անդ-
լիացի եւ յոյն սաւառնորդները պիտի նե-
տեն իրենց ուղիքները, առանց երբեք կա-
րենալու դայն օդը հանել :

Մեր դիրքերուն ամբակոծութիւնը գը-
րեթէ ամէնօրեայ է : Թշնամի սաւառնակ-
ները կը յառաջանան գիշատիչ թռչուննե-
րու նման, լայն բացած իրենց մետաղե-
թևերը, անօրինակ խաժամուժով լեցնե-
լով լեռ, ձոր եւ անտառ :

Երբ հաղիւ կ'երևին անոնք լեռներուն
վերեւ՝ կը սկսին որոտալ հակօդային
թնդանօթները, կրակելով աջ ու ձախ, ի-
րենց իսկ յարուցած ճնշումէն տենդաղին
Դողալով հրաչէկ հողին վրայ :

Տարօրինակ բան. սաւառնակները վա-
խի ոչ մէկ նշան ցոյց կու տան : Միշտ կը
յառաջանան, չչեղելով երբեք իրենց ու-
ղիւղէն, մինչ ուղիքները կը պայթին իրենց
շուրջ, մերթ կարմիր ու մերթ ալ ճերմակ
բոցեր սփռելով միապաղաղ կապոյտին
դէմ : Ու երբ կը հասնին մեր դիրքերուն
վրայ՝ ցոռկները յանկարծ կ'ուղղեն դէ-
պի Օստումի ջուրերը, խելացնոր արա-
զութեամբ դահալիթելով դէպի մեզ, կը-
րակելով անխնայ մեր դիրքերը, ապա
նոյնքան արագութեամբ իրենց ցոռկները
կը նետեն դէպի ետ, կը բարձրանան լեռ-
ներուն կողերն ի վեր, չունչ կ'առնեն, կը
թեքին աջ ու ձախ, մերթ տապալակելով
վիրաւորուած անասուններու նման, մերթ
զուգահեռական սաւառնակով Օստումի ջու-
րերուն, ու յետոյ դարձեալ կը դահալիթ-
ելին դէպի մեզ, բարձրադաղակ ոռնալով,
այս անգամ բանալով իրենց ծանր գնդա-
ցիրները, որոնց հաստիկէ գնդակները կը
պայթին չոր հողին վրայ տեղատարափ
անձրեւի փաթիլներուն նման, ցատկոտե-
լով անհրապոյր ժայռերուն դէմ :

Զինուորները առանց չունչ առնելու կը
կրակեն, անընդհատ լեցնելով հրացան-
ները : Ծանր գնդացիներու սպասեակները
կը շարժին աներեւակայելի արագու-
թեամբ, իրենց գէնքերը անգամ մը տեղա-
ւորելով հոս, ապա հոն, անոնց հրեղէն
բերանները ուղղելով միշտ դէպի թշնա-
մին, որ պտոյտ կու գայ իրենց վրայ, գի-
շատիչ թռչուններու նման :

Հակօդային թնդանօթները, որ վայր-
կեան մը լուծ էին չունչ տալու համար
իրենց միաքող բերաններուն՝ դարձեալ
կը նետուն պայքարին մէջ : Սպանները ոտ-
քի են, հատակոտոր եւ ջղային հրամաննե-
րով կը յորդորեն զինուորները, մերթ կը